# ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)

**Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 հիմնական դպրոցի կառուցման**

| Աղյուսակ 1: Բնապահպանական կառավարման պլան՝ մեղմացնող միջոցառումներ | | | | |
|---|---|---|---|---|
| Ծրագրի գործողություններ | Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ | Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ | Պատասխանատու մարմին | Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է ծրագրի արժեքի մոտ 1,5% |
| **ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ** | | | | |
| 1. Հասարակական լսումներ, հանրության իրազեկում | Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են Ծրագրի ժամկետների ձգձգման պատճառ դառնալ: | 1.1. Դպրոցի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ 1-ին հանրային լսումները անցկացրվել են Երևանի թիվ 153 դպրոցում հոկտեմբերի 13-ին՝ ժամը 12:00-ին, 2016 թ.:<br>1.2. Հանրային լսումներում ներկայացվել է նաև Բողոքների Անդրադարձման Մեխանիզմը (ԲԱՄ), որի ներդրումը անհրաժեշտ է իրականացնել ՀՏԶՀ-ի կողմից սահմանված մեխանիզմին համաձայն (զանգահարել ՀՏԶՀ-ի թեժ գիծ և/կամ տես 4.1 | ՀՏԶՀ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ենթակետ): | | |
| 2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում | ԲԿՊ-ի պահանջները անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ դպրոցի շինարարության և շահագործման փուլերում: | 2.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում: | ՀՏԶՀ | ՀՏԶՀ-ի կողմից հաշվարկված են տվյալ ծրագրի բյուջեում |
| **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ** | | | | |
| **1.Առողջության և աշխատանքային անվտանգության պլան** | | | | |
| 3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները | ԲԿՊ-ի և դպրոցի վերակառուցման ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Աշխատողների, դպրոցի աշխատակիցների և աշակերտների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած հիվանդությունը, վնասվածքը կամ մահը վտանգավոր նյութերի, շին առարկաների ոչ ճիշտ դասավորման և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպման պատճառով անընդունելի է և կպահանջի | 3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, որը մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:<br>3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, այլ: | Կապալառու<br><br><br><br><br><br><br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համապատասխան պատժամիջոցների կիրառում: | 3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը, մասնավորապես չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում:<br>3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:<br>3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:<br>3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ սարքավորումով, ինչպես նաև անհրաժեշտ է նախատեսել լծակներ դրանց կիրառումն ապահովելու համար:<br>3.7. Աշխատանքային անվտանգության և | Կապալառու<br>Կապալառու<br>Կապալառու<br>Կապալառու<br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ՀՏՁՀ-ին:<br>3.8. Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորման իրադարձությունը պատշաճ պետք է գրանցել գրանցամատյանում:<br>3.9. Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը: | Կապալառու<br><br>Կապալառու | |
| **2. Հանրության հետ կապերի և իրազեկման պլան** | | | | |
| 4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ | Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում կարող են տեղի ունենալ Ծրագրի ժամկետների հետաձգումներ: | 4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախատեսվում է իրականացնել հանդիպում ազդակակիր անձանց հետ և տեղեկացնել ԲԱՄ-ի մասին: Հանդիպման ընթացքում կներկայացվի և կներդրվի ԲԱՄ-ը, համաձայն որի՝ | ՀՏՁՀ<br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ա: Շինարարական հրապարակում՝ դպրոցի տարածքում անհրաժեշտ է հիմնել հիմնական կամ շարժական գրասենյակ;<br>Բ: Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ/ ցուցապաստառներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության գրասենյակի գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց, ինչպես նաև հեռախոսահամարների մասին, էլեկտրոնային հասցեներ այդ թվում ՀՏԶՀ-ի համապատասխան բաժնի հեռախոսահամարներ, էլեկտրոնային հասցեներ:<br><br>Գ. Գրասենյակում անհրաժեշտ է պահել բողոքների գրանցամատյան: Բողոքի գրանցման ձևը տես Հավելված 1-ում:<br><br>Դ. Անհրաժեշտ է նշանակել սոցիալական հարցերով զբաղվող պատասխանատու անձ, իսկ 15 | Կապալառու<br><br>Կապալառու<br><br>Կապալառու<br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | օրվա ընթացքում պատասխանել դիմորդին հարցի լուծման վերաբերյալ: | | |
| **3. Շրջակա միջավայրի պահպանության պլան** | | | | |
| **5.** Հողային աշխատանքներ;<br><br>Շինանյութերի փոխադրումներ;<br><br>Այլ շինարարական աշխատանքներ: | Դպրոցի հարակից տարածքում (մոտ 5-50մ հեռավորության վրա) առկա են մասնավոր բնակելի տներ, փոքր բիզնեսի կետեր, որոնց վրա գնահատվում են.<br><br>1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործումից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցություն;<br>2. Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճի հետևանքով ազդեցություն: | *5.1. **Օդի աղտոտման և փոշու կառավարում***<br>*5.1.1.* Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում:<br>*5.1.2.* Անհրաժեշտ է իրականացնել պարբերական ջրցանում շինհրապարակից փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:<br>*5.1.3.* Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու տարածումից՝ | ՀՏԶՀ<br><br><br><br><br>Կապալառու<br><br><br><br><br><br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| |   | խուսափելու համար;<br>5.1.4. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով:<br><br>*5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում*<br><br>*5.2.1.* Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:<br>*5.2.2.* Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, | Կապալառու<br><br>ՀՏՁՀ<br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| |   | ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;<br>*5.2.3.* Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:<br>*5.2.4.* Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;<br>*5.2.5.* Անհաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-րով, այդ թվում՝ ականջակալներով: | Կապալառու<br>Կապալառու<br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • Նախագծվող դպրոցի տարածքում և հարակից տարածքում առկա ծառերի և թփերի վրա ազդեցություն:<br><br><br><br> | ***5.3. Բուսականության պահպանության կառավարում***<br>*5.3.1.* Անհրաժեշտ է նախատեսել վնասման ենթակա եղնինների, ծառերի և թփերի պաշտպանության միջոցառումներ, որպեսզի այդպիսի ծառերը լինեն հեշտությամբ ճանաչելի աշխատողների, տրանսպորտային միջոցների համար և պաշտպանված լինեն շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից (պաշտպանիչ պաստառներ, ջրցանում) և հնարավոր այլ ազդեցություններից:<br>*5.3.2.* Անհրաժեշտ է իրականացնել միայն այն բուսականության հատում, որոնք կխանգարեն ընթացիկ | Կապալառու<br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| |  | շինարարական աշխատանքներին:<br>*5.3.3.* Անհրաժեշտ է տեղեկացնել ՀՏՁՀ-ին, իսկ անհրաժեշտության դեպքում ձեռք բերել նաև թույլտվություն լիազորված մարմիններից ծառերի և թփերի հատման վերաբերյալ:<br>5.3.4. Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության խնամքի և ոռոգման միջոցառումներ:<br>5.3.5. Բուսականությունը մաքրելու նպատակներով անհրաժեշտ է օգտագործել միայն այն թունաքիմիկատները, որոնք նշված չեն Կառավարության 2005 թ.-ի մարտի 17-ին կայացրած N293 որոշման մեջ և բացառել կայուն օրգանական աղտոտիչներ՝ POP, | Կապալառու<br><br>Դպրոցի տնօրինություն/ կապալառու<br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 4. Շինարարական տարածքում առկա է որոշակի քանակությամբ ազդեցության ենթակա բուսահող:<br><br><br> | պարունակող քիմիական նյութերի գործածությունը:<br><br>*5.4. **Բուսահողի կառավարում***<br>5.4.1. Անհրաժեշտ է առանձնացնել տարածքում եղած և ազդեցության ենթակա բուսահողը և պահեստավորել տարածքի ներսում՝ դրա համար հատուկ հատկացված ժամանակավոր կուտակման տեղերում:<br>5.4.2. Անհրաժեշտ է շինաշխատանքների ընթացքում հնարավորինս բացառել տարածքում առկա բուսահողի վրա ազդեցությունները (շինթափոնների և կեղտաջրերի տարածում); | Կապալառու<br><br>Կապալառու | |

| **4. Ենթակառուցվածքների և այլ ազդակակիր օբյեկտների կառավարման պլան** | | | | |
|---|---|---|---|---|
| 6. Ենթակառուցված քների և այլ ազդակիր օբյեկտների վրա ազդեցություն: | • Դպրոցի շենքին կից առկա է էլեկտրական ենթակայան:   • Տարածքում առկա գազային խողովակի և դպրոցի ցանկապատին կից գազային բաշխիչ վահանակի վրա ազդեցություն: | 6.1. Համաձայն նախագծի, ենթակայանի ապամոնտաժում չի նախատեսվում, իսկ շինարարության ընթացքում անհրաժեշտ է ձեռնարկել ենթակայանի պահպանմանը ուղղված հնարավոր բոլոր միջոցառումներ: 6.2. Անհրաժեշտ է ձեռնարկել գազային վահանակի և խողովակների պաշտպանիչ գործողություններ դրանց անվտանգությունը ապահովելու նպատակով: | Կապալառու Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| |   07 07 2016 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 3. Դպրոցի շենքի դիմաց առկա հուշարձանի վրա ազդեցություն:   | 6.3. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է իրականացնել հուշարձանի մեկուսացում և համապատասխան պահպանումը ողջ շինարարության ընթացքում: | Կապալառու | |
| | 4. Դպրոցի շենքին կից առկա է մասնավոր ավտոկայանատեղի:   | 6.4. Անհրաժեշտ է խուսափել կից ավտոտնակի վրա ազդեցությունից;<br>6.5. Շինաշխատանքների ընթացում ավտոտնակի վրա առաջացած հետևանքների վերականգնման աշխատանքները կիրականցվեն հետ շինարարական փուլում՝ ըստ սեփականատեր | Կապալառու<br><br>Սեփականատեր շահագործող | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | շահագործողի հետ ձեռք բերված համաձայնության: | | |
| **5. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան** | | | | |
| 7. Շին հրապարակի կազմակերպում: | Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ: | 7.1. Շին հրապարակը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես նախագծվող դպրոցի տարածքի ներսում՝ բացառելով այլ ազակակիր տարածքների օգտագործումը առանց համապատասխան թույլտվության:<br>7.2. Անհրաժեշտ է կազմել շին հրապարակի կազմակերպման սխեման, որում նշված կլինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, բուսահողի ժամանակավոր պահեստավորման, նյութերի և թափոնների | Կապալառու<br><br><br><br><br><br><br><br><br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն: | | |
| | | 7.3. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում; | Կապալառու | |
| | | 7.4. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց հորերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում և բացառել անհիմաստ բաց հորերի առկայությունը շինհրապարակում; | Կապալառու | |
| | | 7.5. Անհրաժեշտ է ձեռնարկել բաց հորերի տեսանելի կերպով ցանկապատում և անհրաժեշտության դեպքում՝ | Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | նախազգուշացնող նշանների տեղադրում:<br>7.6. Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված: | Կապալառու | |
| **6. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան** | | | | |
| **8.** Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ | 1. Դպրոց տանող հանրային ճանապարհների (հիմնական հանրային և դեպի մասնավոր բնակելի տներ տանող ճյուղավորումները) վիճակը գնահատվում է բավարար մեքենաների և բեռնատարների երթևեկության կազմակերպման համար:<br><br>Երթևեկության և մոտեցման ճանապարհների վրա հնարավոր | 8.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով;<br>8.2. Հնարավորինս պետք է խուսափել երթևեկել ճզնաժամային ժամերին;<br>8.3. Անհրաժեշտության դեպքում ձեռք բերել պետ. մարմիններից շին տրանսպորտային | Կապալառու<br><br>Կապալառու<br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ազդեցություններն են.<br>• երթևեկության խափանումներ<br>• երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ;<br>• փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ<br>• հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում<br>• շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների վնասում | միջոցների երթևեկության ուղիների թույլտվություն;<br>8.4. Շինարարական հրապարակի մուտքերն ու ելքերն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ նվազագույնս խոչընդոտեն ընդհանուր երթևեկությանը և հասարակական անվտանգությանը; Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ;<br>8.5. Վարորդները կուսուցանվեն ԵԿՊ-ի (Երթևեկության կառավարման պլանը) և անվտանգության վերաբերյալ:<br>8.6. Մեքենաների և սարքավորումների | <br><br><br><br>Կապալառու<br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br>Կապալառու<br><br><br><br><br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում: | | |
| | | 8.7. Անհրաժեշտ է ապահովել շինհրապարակը լքելիս բեռնատարների ծածկով երթևեկումը: | Կապալառու | |
| | | 8.8. Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի կլանիչներով և խլացուցիչներով: | Կապալառու | |
| | | 8.9. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար: | Կապալառու | |
| | | 8.10. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և | Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով; | | |
| | | 8.11. Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվադողերը մաքրելու միջոցներով (աշխատանքային տեղամասում կոպճային մակերևույթների և փոխադրամիջոցների լվացման միջոցներ՝ համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար: | Կապալառու | |
| | | 8.12. Պարբերաբար պետք է ստուգել հարակից ճանապարհների վիճակը՝ պարզելու համար շինհրապարակից տարածվող ցեխի | Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | առկայությունը, իսկ տարածման դեպքում անհրաժեշտ է ձեռնարկել մաքրման աշխատանքներ: | | |
| **7. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան** | | | | |
| **9.** Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր ( դժբախտ պատահարներ և այլն) | Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ: | 9.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում;<br>9.2. Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:<br>9.3. Անհրաժեշտ է իրականացնել նյութերի անվտանգության տվյալների թերթիկների, արտակարգ իրավիճակների | Կապալառու<br><br><br><br><br><br><br>Կապալառու<br><br><br><br><br><br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների/պլակատների տեղադրում<br>9.4. Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին;<br>9.5. Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;<br>9.6. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական | Կապալառու<br>Կապալառու<br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պահանջներին համապատասխան; | | |
| | | 9.7. Քիմիական և այլ, վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է օգտագործել միայն անհրաժեշտության դեպքում: Դրանք անհրաժեշտ է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ապահովված է անանցանելի/ անթափանց հատակով և պատնեշով: | Կապալառու | |
| | | 9.8. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի | Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:<br>9.9. Արտակարգ պատահարի դեպքում անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել ՀՏԶՀ-ին հաշվետվության հատուկ ձևը լրացնելու միջոցով (ՀԱՎԵԼՎԱԾ 3): | Կապալառու | |
| **8. Թափոնների և նյութերի կառավարման պլան** | | | | |
| **10.** Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ | • Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում:<br>• Այն շինարարական նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից իրենցից պոտենցիալ վտանգ են ներկայացնում:<br>• Ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոններ և աղտոտիչներ: | 10.1. Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար;<br>10.2. Անհրաժեշտ է դասակարգել | Կապալառու<br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ, վտանգավոր, ինչպես նաև վերամշակման ենթակա աղբը:<br>10.3. Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում:<br>10.4. Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:<br>10.5. Կենցաղային աղբի աղբամաններում հավաքման և պարբերաբար հեռացման համար անհրաժեշտ է ձեռք բերել լիազորված մարմիններից թույլտվություն: | Կապալառու<br>Կապալառու<br>Կապալառու<br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 10.6. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը՝ շիհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով: | | |
| **9. Աշխատողների և ղեկավար անձնակազմի դասընթացներ** | | | | |
| **11.** Աշխատողների և ղեկավար անձնակազմի վերապատրաստում | Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ: | 11.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն; | ՀՏԶՀ Կապալառու | |
| | | 11.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և | Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | արտակարգ իրավիճակների արարողակարգի մասին;<br>11.3. Բոլոր վարորդներին անհրաժեշտ է իրազեկել ԵԿՊ-ի վերաբերյալ | Կապալառու | |
| **10. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան** | | | | |
| **12.** Շինհրապարակի վերականգնումը<br><br>Դպրոցի տարածքի բարեկարգում/կանաչ ապատում | Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները: | 12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն;<br>12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;<br><br>12.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի | Կապալառու<br><br>Կապալառու<br><br>Կապալառու<br><br>Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | արտահոսքի հետքերը;<br>12.4. Անհրաժեշտ է իրականացնել ՀՏՁՀ-ի կողմից մշակված ընդունման- հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները;<br>12.5. Անհրաժեշտ է կատարել կանաչապատման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;<br>12.6. Անհրաժեշտ է ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանում և մոնիտորինգ՝ բուսական ության բարձր աճն ապահովելու համար: Կանաչապատ գոտիների ոռոգումը անհրաժեշտ է իրականացնել համայնքում ընդունված տարբերակով: | Դպրոցի տնօրինություն/Կապալառու<br><br>Դպրոցի տնօրինություն | |

| ՀԵՏ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ | | | | |
|---|---|---|---|---|
| **13.** Թերությունների վերացման աշխատանքներ | Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները | 13.1. Շինարարական փուլի համար սահմանված հատուկ մեղմացնող միջոցառումներ. Անհրաժեշտ է ապահովել կանաչ զանգվածի և տնկված ծառերի 90% կպչողականությունը և աճը: Հակառակ դեպքում անհհրաժեշտ է վերատնկել և փոխարինել բոլոր վնասված կամ անառողջ տեսակները: | Դպրոցի տնօրինություն/Կապալառու | |
| **14.** Բուսականության վերականգնում | Բուսականությունը չի աճում սպասվածին համաձայն | 14.1. Անհրաժեշտ է ներառել Ծրագրի համար նախատեսված թփերի և այլ բուսականությունը դպրոցի կանաչապատ տարածքների սպասարկման պլանում: | Դպրոցի տնօրինություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 14.2. Անհրաժեշտ է իրականացնել կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ: | ՀՏԶՀ<br><br>Դպրոցի տնօրինություն | |
| **15.** Բնապահպանական աուդիտ | | 15.1. Իրականացնել հետշինարարական բնապահպանական աուդիտ | ՀՏԶՀ | |

| Աղյուսակ2: Բնապահպանական կառավարման պլան՝ մոնիտորինգ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Վայրը/ Գործողությունը/ Փուլը | Մոնիտորինգի ենթակա պարամետրեր | Մոնիտորինգի կետեր | Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ | Բնապահպանական գործողությունների ցուցանիշ | Պատաս խանատ ուներ | Մոնիտորինգի հաճախականություն |
| **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ** | | | | | | |
| 1. Աշխատանք ունենալու հնարավորություններ | Աշխատուժը համալրված է տեղացի բնակիչներից, կանանցից և ցածր որակավորում ունեցող աշխատողներից | Բոլոր շինարարակա ն տեղամասերը | Փաստաթղթերի ստուգում այդ թվում՝ կապալառո ւի կողմից աշխատատեղեր, նախատեսված են տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց համար | Կապալառուի կողմից աշխատանքի ընդունված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց թիվը | ՀՏԶՀ ՎԽ | Կսահմանվի Կապալառուի կողմից աշխատուժի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործողությունների մոբիլիզացիոն փուլում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. Հասարակական լսումներ և կապը հանրության հետ | Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ Ազդակիր կողմերի տեղեկացվածություն Ծրագրի Բողոքներին արձագանքման մեխանիզմի վերաբերյալ | Բոլոր շին տեղամասեր | Փաստաթղթերի ստուգումներ: Շինարարական տեղամասերի ստուգայցեր Հանրային լսումներ Բողոքների գրանցամատյանի ստուգումներ | Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվելէ ԲԳՌԻԾ-ում նկարագրված բոլոր պահանջվող ընթացակարգերին համապատասխան | ՀՏԶՀ | Հանրային լսումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ; ԲԱՄ-ը՝ կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |
| 3. Տարածքի մաքրում բուսականությունից | Տարածքի մաքրումը բուսականությունից հնարավորինս նվազագույնի է հասցված Շինհրապարակի մերձակայքի բուսականությունը պաշտպանված է | Բոլոր շին տեղամասեր | Տարածքի բուսականություն ից մաքրմանը վերաբերվող փաստաթղթերի ստուգում Շին. հրապարակի ստուգայցեր | Հատված թփերի գրանցամատյանը առկա է | ՀՏԶՀ | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |
| 4. Շրջակա միջավայրի պահպանություն | Նստվածքների առաջացում<br><br>Փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ<br><br>Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում | Բոլոր շին տեղամասեր;<br><br>Շինհրապարակից 50 մ հեռավորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների զգայուն ընկալիչներ | Ակնադիտական ստուգումներշինհրապարակի ստուգայցերի միջոցով;<br><br>Բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում;<br><br>Փոշու, աղմուկի, թրթռումների | Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը;<br><br>Փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում; | ՀՏԶՀ<br><br>ՎԽ | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում: | | | |
| 5. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր | Շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հատակագիծը և կառավարումը: | Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ: | Փաստաթղթերի ստուգում;<br><br>Շին աղբի և թափոնների տեղադրման վայրերի ստուգայցեր | Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի գտնվելու վայրը և հատակագիծը համապատասխանում են պետ մարմինների կողմից թույլատրվածին և Տարածքի կառավարման պլանին:<br><br>Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը | ՀՏԶՀ<br><br>ՎԽ | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |
| 6. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը | Երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; Դպրոցներին, դասերին | Ճանապարհների օգտագործում, սարքավորում | Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած | Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը | ՀՏԶՀ<br>ՎԽ | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | և հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները Նանվտանգության հարցերը Ճանապարհներին և այլ կառույցներին՝ հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ: | ների և Նյութերի տեղափոխությ ան համար; Շինհրապարա կի մոտեցման մուտքերը | ստուգայցեր | Պլանի մասնագրերին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը | | |
| 7. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում | Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր | Բոլոր շինարարակա ն տեղամասերը | Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր | Պատահարների դեպքում պատահարների հաշվետվության ձևը լրացված է: Պատահարները կառավարվում են Արտակարգ իրավիճակների պլանին համապատասխան: | ՀՏԶՀ<br>Վխ | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |
| 8. Թափոնների և շին. նյութերի կառավարում | Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության | Բոլոր շինարարակա ն տեղամասերը | Փաստաթղթերի ստուգում; Շինհրապարակ, հանքեր, թափոնավայրեր | Շին աղբը, կենցաղային աղբը և ոչ պիտանի և ավելցուկային նյութերի | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ընթացքում | | կատարած ստուգայցեր: | քանակները կառավարվում են Պլանին և հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում: Թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է: | | |
| 9. Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում | Շինհրապարակը մաքրված է, նութերը և թափոնները հեռացված են:<br><br>Բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են:<br><br>Շինհրապարակի տարածքը բարեկարգված է: | Տեղամասեր կատարած ստուգայցեր | Շինհրապարակի վերա-կանգնման, կանաչապատման և բուսականության վերականգն-ման պլանն առկա է: Բոլոր մակերեսները այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը: | Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից: Թփերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին:<br><br>Ապահովված է թփերի90% կպչողականությունը | ՀՏԶՀՎԽ | |

| ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈՒԼ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10.Թերությունների վերացման աշխատանքներ | Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ | Դպրոցի տարածքի սահմաններում | Բողոքներ զգայուն ընկալիչների կողմից | Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռումների, օդի որակի չափագրումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին | ՀՏԶՀ | |
| 11.Տարածքի բարեկարգում | Թփերի և այլ բուսականության նորմալ աճ | Կանաչապատման բոլոր տեղամասերը | Ստուգայցեր | Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ | ՀՏԶՀ<br>Դպրոցի տնօրինություն | |

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՁԵՎ

| Դիմումը ներկայացնելու ամիս/ ամսաթիվը | Դիմողի անուն/ ազգանունը | Դիմողի կարգավիճակը (դպրոցի դասատու, աշակերտ, ծնող, հարևան, ձեռնարկատեր, այլ) | Բողոքի/առաջարկի բովանդակությունը | Դիմողի ստորագրությունը | Դիմումի կարգավիճակը (լուծված/ ընթացքում/ փոխանցված ՀՏԶՀ-ին/ չլուծված) |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՅՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿԻ ՁԵՎ

## Մեղմացնող միջոցառումների և ստուգայցի մոնիտորինգի մասին հաշվետվություն N

Նախագիծ: ________________________________________

Իրականացնող գործակալություն: ________________

Ստուգման տեղամասը:____________________________

Կապալառու: ______________________________

Եղանակային պայմանները ստուգայցի պահին:________

Ստուգայցն իրականացրել է: Անուն/ ազգանուն/ պաշտոն: ______________________

Ամսաթիվ: ______________________________

Մոնիտորինգի ստուգայցն իրականացվել է Կապալառուի ներկայացուցչի մասնակցությամբ:Անուն/ ազգանուն/ պաշտոն

| Նախագծման փուլ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Շինարարական գործողություն | | Մեղմացնող միջոցառում (ըստ ՆԳՀ/ ԲԿՊ) | Մեղմացման միջոցառում իրականացված է Այո/ Ոչ/ ՈԿ | Պատասխան ատու | Ուղղիչ գործողության պահանջ (ՈւԳՊ) այդ թվում վերջնաժամկետ | Նախորդ ՈւԳՊ կարգավիճակը (ուղղված է/ այլ միջոցառումներ են պահանջվում) |
| Նախնական գնահատման հայտ (ՆԳՀ) | | Բնապահպանական փորձաքննության եզրակացությունն առկա է | | ՀՏԶՀ | | |
| Շին աղբի և թափոնների տեղադրման վայր | | Թափոնների և շինարարական աղբի տեղադրման թույլտվությունն առկա է | | ՀՏԶՀ | | |
| Ծառերի և թփերի հատում | | Ծառերի հատման թույլտվությունն առկա է | | ՀՏԶՀ | | |
| ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ | | | | | | |
| Շին հրապարակ: ընդհանուր պահանջներ | | | | | | |
| Բնապահպանական կառավարում. բնապահպանական թիմ, առողջություն և աշխատանքի անվտանգություն, արտակարգ իրավիճակներ, բողոքների անդրադարձի մեխանիզմ | | | | | | |
| Շինարարական գործողություն | | Մեղմացնող միջոցառում (ըստ ՆԳՀ/ ԲԿՊ) | Մեղմացման միջոցառում իրականացված է | Պատասխան ատու | Ուղղիչ գործողության պահանջ ՈւԳՊ այդ թվում վերջնաժամկետ | Նախորդ ՈւԳՊ կարգավիճակը (ուղղված է/ այլ միջոցառումներ են պահանջվում) |

Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 հիմնական դպրոցի կառուցման

| | | | Այո/ Ոչ/ ՈԿ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ***Բնապահպանական պատասխանատուներ*** | | | | | | |
| Բոլոր գործողությունները | 1. | Բնապահպանական/ առողջության և աշխատանքի անվտանգության պատասխանատուն նշանակված է և ներկա է շին հրապարակում: | | | | |
| **Կառավարման միջոցառումներ** | | | | | | |
| Բոլոր գործողությունները | 2. | Դպրոցի սահմաններից դուրս այլ տարածքների օգտագործումը բացառված է, այդ թվում՝ ճամբարներ, ավտոկայանատեղեր և այլն: | | | | |
| Բոլոր գործողությունները | 3. | Ծառերի հատումն իրականացված է թույլտվությանը համապատասխան: Այլ բուսականությունը համապատասխան կերպով պաշտպանված է: | | | | |
| ***Առողջություն և աշխատանքի անվտանգություն*** | | | | | | |
| Բոլոր գործողությունները | 4. | Նախազգուշացնող նշաններն ու ցանկապատումն ապահովված է բոլոր բաց հորերի և շին հրապարակի շուրջը: | | | | |
| Հողային աշխատանքներ | 5. | Բաց հորերի հետլիցքն իրականացված է կարճ ժամկետներում:<br>Անհիմաստ բաց հորեր չեն նկատվել: | | | | |
| Բոլոր գործողությունները | 6. | Կողմնակի անձանց (հատկապես աշակերտների) մուտքը շին հրապարակ հուսալի արգելափակված է | | | | . |
| Բոլոր գործողությունները | 7. | Բանվորներն ու ղեկավար անձնակազմն ապահովված են և կրում են արտահագուստ. և անհրաժեշտության դեպքում՝ անձնական պաշտպանիչ միջոցներ ԱՊՄ | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ասբեստի նյութեր պարունակող կառույցների ապամոնտաժում | 8. | Աշխատանքներն իրականացվում են ԲՆ կողմից տրամադրված Ուղեցույցին համապատասխան Վտանգավոր նյութերի հետ աշխատող անձնակազմն ապահովված է և կրում է ԱՊՄ : | | | | |
| Բոլոր գործողությունները | 9. | Ծրագրի և իրականացնող մարմինների մասին տեղեկատվական ցուցանակը տեղադրված է: | | | | |
| Բոլոր գործողությունները | 10. | Աշխատողներն ապահովված են անհրաժեշտ սանիտարա հիգիենիկ պայմաններով. խմելու և կենցաղային կարիքների ջուր, ընդմիջման և հանգստի հարմարություններ, զուգարան, և այլն: | | | | |
| Բոլոր գործողությունները | 11. | Առաջին բուժ օգնության դեղատուփն առկա է և հասանելի է բոլոր աշխատողների համար: | | | | |
| Բոլոր գործողությունները | 12. | Կրակմարիչն առկա է, գտնվում է գործածման համար պատրաստ վիճակում և հասանելի է բոլոր աշխատողների համար: | | | | |
| Բոլոր գործողությունները | 13. | Օրվա մութ ժամերի լուսավորումն ապահովված են: | | | | |
| ***Արտակարգ իրավիճակների պլան*** | | | | | | |
| Բոլոր գործողությունները | 14. | Արտակարգ իրավիճակների պատասխանատու անձը ներկա է շին հրապարակում: | | | | |
| Բոլոր գործողությունները | 15. | Արտակարգ իրավիճակների ընթացակարգերի պաստառը կոնտակտային տվյալներով առկա է, թարմացված է և փակցված է տեսանելի վայրում շին հրապարակի մի քանի հատվածներում: | | | | |
| Բոլոր | 16. | Պատահարների մասին հաշվետվությունը | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| գործողությունները | | ներկայացված է: | | | | |
| ***Բնապահպանական/ աշխատանքի անվտանգության դասընթացներ*** | | | | | | |
| Բոլոր գործողությունները | 17. | Աշխատողներն ուսուցանված են ՆԳՀ/ ԲԿՊ-րի մասին աշխատանքը սկսելուց առաջ: | | | | |
| Բոլոր գործողությունները | 18. | Աշխատողներն ուսուցանված են արտակարգ իրավիճակներին արձագանքելու ընթացակարգերի մասին աշխատանքը սկսելուց առաջ: | | | | |
| Բոլոր գործողությունները | 19. | Աշխատողները ստացել են աշխատանքի անվտանգության հրահանգավորումը աշխատանքը սկսելուց առաջ և համապատասխան գրառումներն առկա են գրանցամատյանում: | | | | |
| ***Շին հրապարակի մաքրություն*** | | | | | | |
| Բոլոր գործողությունները | 20. | Շին հրապարակը և մոտեցնող հասարակական ճանապարհները պահվում է մաքուր վիճակում և զերծ է շին և կենցաղային աղբից | | | | |
| Բոլոր գործողությունները | 21. | Տեղադրված են աղբամաններ կենցաղային աղբի հավաքման համար | | | | |
| ***Կապը հանրության հետ և բողոքներին անդրադարձման մեխանիզմ՝ բնապահպանական հարցեր*** | | | | | | |
| Բոլոր գործողությունները | 22. | Տեղի են ունեցել շին աշխատանքների, բնապահպանական ազդեցությունների և մեղմացնող միջոցառումների մասին հանդիպումներ ազդակիր անձանց հետ: | | | | |
| Բոլոր գործողությունները | 23. | Բողոքների գրանցամատյանը վարվում է և առկա է շին հրապարակում: Նախորդ ստուգայցի ժամանակ նկատված բողոքները լուծված են: | | | | |
| Բոլոր գործողությունները | 24. | Դպրոցի տնօրինությունը և այլ ազդակիրները զգուշացված են հնարավոր | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | անհարմարությունների մասին. ջրի, էլեկտրականության ժամանակավոր դադարների և այլն: | | | | |
| ***Բնապահպանական պարամետրեր. <u>Փոշու հսկողություն</u>*** | | | | | | |
| Հողային աշխատանքներ, նյութերի մատակարարում, առաջացած շին աղբի հեռացում | 25. | Բեռնատարներն փոխադրումներն իրականացնում են փակ ծածկով: | | | | |
| | 26. | Շին հրապարակը պարբերաբար ջրցանվում է: | | | | |
| | 27. | Սարքավորումներն ու մեքենաներն ապահովված են արտանետվողգազերի կլանիչներով: | | | | |
| ***<u>Աղմուկի մակարդակի հսկողություն</u>*** | | | | | | |
| Շին տեխնիկայի աշխատանքներ | 28. | Շին աշխատանքների աղմուկի մակարդակը գտնվում է մոտակա ընկալիչների համար ընդունելի սահմաններում | | | | |
| | 29. | Սարքավորումներն ապահոված են սարքին խլացուցիչներով | | | | |
| | 30. | Աղմկահույց աշխատանքներն իրականացվում են դասերից հետո և օրվա ցերեկային ժամերին | | | | |
| ***<u>Թրթռումների մակարդակի հսկողություն</u>*** | | | | | | |
| Շին տեխնիկայի աշխատանքներ | 31. | Թրթռումների ուժգնությունն ու ժամանակահատվածը հսկվում են | | | | |
| ***<u>Կեղտաջրերի հսկողություն</u>***: | | | | | | |
| Հեղուկ նյութերի օգտագործման աշխատանքներ | 32. | Արտահոսքերը կառավարվում են պատշաճ ձևով | | | | |
| Հողային աշխատանքներ | 33. | Նստվածքներով հագեցած կեղտաջրերը հսկվում են | | | | |
| Հողային աշխատանքներ, | 34. | Ջրահեռացման համակարգերը և ջրային այլ ուղիները խցափակված չեն | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| նյութերի մատակարարում, առաջացած շին աղբի հեռացում | | նստվածքներով և պաշտպանված են | | | | |
| Մեքենաների գործածությամբ աշխատանքներ | 35. | Բեռնատարների անիվները մաքրվում են մինչև շին հրապարակի լքելը և հասարակական ճանապարհներ մուտք գործելը | | | | |
| Հողային աշխատանքներ | 36. | Հողային հանույթը հեռացված է շին հրապարակից կամ կանոնավոր կուտակված է հատուկ հատկացված ժամանակավոր կուտակման վայրում | | | | |
| ***Շինարարական աղբի և թափոնների կառավարում*** | | | | | | |
| Շին աղբի հեռացում | 37. | Շին աղբը և թափոնները տեղադրված են սահմանված վայրում | | | | |
| Հողային աշխատանքներ, կառույցների և ենթակառուցվածքների քանդում և ապամոնտաժում | 38. | Անվտանգ թափոնները (հողային հանույթը, քարերը, բետոնե և մետաղական մասերը, այլ) կառավարվում են ԹԿՊ համապատասխան | | | | |
| Վտանգավոր նյութեր՝ այդ թվում ասբեստ պարունակող նյութեր պարունակող կառույցների քանդում կամ ապամոնտաժում | 39. | Վտանգավոր թափոնները (այդ թվում ասբեստ պարունակող)կառավարվում են ԹԿՊ համապատասխան | | | | |
| Քիմիկատների, վառելիքի, քսանյութերի, յուղի օգտագործմամբ գործողություններ | 40. | Հեղուկ թափոններն ու արտահոսքերը, աղտոտված հողը կառավարվում ենԹԿՊ համապատասխան | | | | |
| ***Շինարարական աղբի և թափոնների տեղադրման վայրեր*** | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Տարածքի օգտագործում | 41. | Տարածքի օգտագործման համար բոլոր թույլտվություններն առկա են | | | | |
| Տարածքի օգտագործում | 42. | Տարածքի օգտագործման համար ՏԿՊ-ըն առկա են | | | | |
| Տարածքի օգտագործում | 43. | Տարածքի օգտագործումը համապատասխանում է ՏԿՊ-ին | | | | |
| ***Տարածքի վերականգնում (այդ թվում՝ թափոնավայրերի)*** | | | | | | |
| Բոլոր գործողությունները | 44. | Տարածքը մաքրված է բոլոր թափոններից և շինարարական աղբից | | | | |
| Բոլոր գործողությունները | 45. | Տարածքից հեռացված են բոլոր մեքենաներն ու սարքավորումները, ինչպես նաև ապամոնտաժված ժամանակավոր օժանդակ կառույցները | | | | |
| Բոլոր գործողությունները | 46. | Հարակից հասարակական ճանապարհները վերականգնված և մաքրված են | | | | |
| Բոլոր գործողությունները | 47. | Կանաչապատ տարածքի խնամքն իրականացվում է | | | | |

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

| Պատահարի ամիս/ ամսաթիվը | Պատահարի նկարագրությունը | Պատահրի վերացման միջոցառումները | Միջոցառումների ժամկետները և պատասխանատուն | Պատահրի վերացման կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |